



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

<< 10 >> ապրիլի 2019թ.

N 524-ՇԿ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ
ԲԱԺՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 11-ի N 3-Ն որոշմանը հաստատված հավելվածի 12-րդ կետի 4-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 26-րդ կետի 10-րդ ենթակետով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության առաջին բաժնի մասնագիտական գիտելիքների շրջանակը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Invalid signature

X 

VERIFIED OCSP 10/04/2019 17:11:54 GMT+4

Signed by: HARUTYUNYAN VAZGEN 3703770104

Վ. Հ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Յ Ա Ն

**ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ
 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԾՐՋԱՆԱԿԸ**

N	ԲԱԶԱՅԻՆ	ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ
1	<p>Իրավական ակտեր</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ Սահմանադրություն • «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք • «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենք • «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենք • «Հանրային ծառայության մասին» օրենք • «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենք • Քաղաքացիական ծառայության մասին օրենսդրություն • ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշում • ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի սեպտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության առաջին բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 476-Լ որոշում 	<p>Իրավական ակտեր</p> <ul style="list-style-type: none"> • «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենք • ՀՀ առաջին փոխվարչապետի 2018 թվականի նոյեմբերի 5-ի «Պետական և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց պաշտոնի նշանակման, վերապատրաստման, կատարողականի գնահատման, ծառայողական քննությունների հետ կապված առանձնահատկությունները և քաղաքացիական ծառայության պաշտոնների ցանկը հաստատելու մասին» թիվ 270-Ն որոշում • «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքից բխող այլ իրավական ակտեր
2	<p>Այլ</p> <ul style="list-style-type: none"> • Հայերենի և մեկ օտար լեզվի (ռուսերեն կամ անգլերեն) իմացություն • Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ունակություն 	<p>Այլ</p> <ul style="list-style-type: none"> • Համակարգչային հիմնական գործիքների (Word, Excel, PowerPoint) վարժ կիրառման, ինչպես նաև համակարգչային տեխնիկայից օգտվելու ունակություն